11420

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«15» 10 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ № 216 - 24**

*Նախաձեռնող՝* *«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ*
*Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Ազատության 35/33*

*Գործունեությունը՝* *Կապան համայնքի Սյունիք բնակավայրում կրթահամալիրի կառուցում*
*Սյունիքի մարզ*

*Առդիր՝ 5 թերթ*

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 216 - 24**

**«15» հոկտեմբերի 2024թ.**

**Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրում կառուցվող կրթահամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

| | |
|---|---|
| Նախաձեռնող՝ | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր |
| Գործունեության տեսակը՝ | /Բ կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝ | Սյունիքի մարզ, Կապան համայնք, Սյունիք բնակավայր |

**Ներածական մաս.** Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրում գոյություն ունեցող դպրոցի տարածքում նախատեսվում է իրականացնել կրթահամալիրի կառուցում:

Նախատեսվող գործունեության համար նախատեսված տարածքը կազմում է 1.02 հա՝ համաձայն 09-082-0013-0013 կադաստրային ծածկագրով №03112017-09-0034 սեփականության վկայականի: Տարածքում առկա դպրոցը 2138 քմ (արտաքին մակերեսը 2244.2 քմ) է:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս**. Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ստանդարտներին համապատասխան և ժամանակակից լուծումներով դպրոցի նոր շենք: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել է 144 աշակերտի համար միջնակարգ դպրոց և 40 երեխայի համար՝ մանկապարտեզ:

Նոր դպրոցը նախատեսվում է կառուցել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչպես նաև կառուցվելու է բացօդյա մարզադաշտ և վազքուղի: Սպորտային հրապարակները նախատեսված են ռետինե ծածկույթով:

Ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 2714 մ$^2$, բարեկարգման մակերեսը 8622 մ$^2$, որից կանաչապատման մակերեսը կազմում է 4450 մ$^2$:

Համաձայն էսքիզային նախագծի՝ դպրոցը երկհարկանի է: Կառուցվելու է նաև 1 հարկանի մանկապարտեզ՝ 2 խմբի համար, որը միջանցքով կապված կլինի դպրոցի մասնաշենքի հետ:

Նախատեսվում է նկուղային հարկ՝ 440.64 մ² ընդհանուր մակերեսով, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես թաքստոց՝ հագեցած հարկ տանող հաշմանդամների համար նախատեսված աստիճանային ամբարձիչով:

Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, աշխատասենյակներ և ճաշարան, երկրորդ հարկում՝ ինֆորմատիկայի, մեթոդ միավորման, ռազմագիտության, ռոբոտատեխնիկայի դասասենյակներ և ուսուցչանոց:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճների մուտքերի մոտ նախատեսված են թեքահաթակներ:

Բոլոր հարկերն իրար հետ կապված են՝ հագեցած հաշմանդամների համար նախատեսված միջհարկային ամբարձիչով: Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօդյա միջոցառումների համար:

Կառույցի երեսպատումը նախատեսվում է իրականացնել բազալտե երեսապատման սալիկներով և տրավերտինով: Պատուհանները նախատեսված են ալյումինե, երկշերտ ապակեփաթեթով, աստիճանների երեսապատումը՝ բազալտե սալիկներով, հատակը՝ խեցեսալիկներով և վինիլներով:

Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով:

Շինարարությունն իրականացվելու է երկու փուլով: Առաջին փուլի ընթացքում իրականացվելու են հողային աշխատանքներ՝ դպրոցի գլխավոր մասնաշենքի կառուցում, այնուհետև քանդվելու է ներկայիս դպրոցը:

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 4090 մ³ շինաղբի տեսքով, որը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տեսակավորվելու և հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ: Ընդհանուր հողային աշխատանքների ծավալները կազմելու են՝ լիցք՝ 1200 մ³, հանույթ՝ 8050 մ³, բուսաշերտ՝ 50 մ³: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 640 օր:

Աշխատողները տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտվելու են կից ճանապարհով անցնող գոյություն ունեցող ջրագծից: Ջրցանի համար նախատեսված տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով:

Դպրոցի շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով:

Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է ջեռուցման միջոցով՝ էլեկտրական յուղային ռադիատորներով, ինչպես նաև ջրային երկխողովականի ջրի մեխանիկական շրջանառությամբ ալյումինե ռադիատորներով, բացառությամբ սպորտսրահի՝ որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ: Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է:

Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո նախատեսվում է տարածքը ցանկապատել 1,40 մ բարձրությամբ ճաղաշարով: Ապահովվելու է արտաքին լուսավորությունը: Ֆուտբոլի դաշտի ցանկապատը նախատեսված է 4.2 մ բարձրությամբ՝ 60 սմ բետոնե հիմքով:

Դպրոցի հարավային տարածքում նախատեսվում է տեղադրել 175 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության նպատակով:

Դպրոցի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակներ չեն արձանագրվել, գործունեության ենթակա տարածքում պատմության և մշակույթի, բնության անշարժ հուշարձանները բացակայում են:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում իրականացվելու է գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան,
- շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի լվացումը կատարվելու է անիվների լվացման հարթակում, շինհրապարակից դուրս գալու ընթացքում:
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- շինարարական հրապարակում շինաղբը, բետոնյա մնացորդները, պարկերը և այլն, հավաքվելու են անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և տեղափոխվելու են համայնքի կողմից հատկացված վայր,
- քանդման ընթացքում առաջացած շինարարական նյութերի տեսքով թափոնները՝ փայտ, քար, պատուհաններ, դռներ և այլն, կտեսակավորվեն առանձին-առանձին և կտեղափոխվեն շինհրապարակում: Առանձնացված թափոնները կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից կամ կհանձնվեն համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին,
-կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- օգտագործվող շինտեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում են տարեկան մոտ 300,0 հազար ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Սյունիքի մարզի, Կապան համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, Սյունիքի մարզպետարանից, ինչպես նաև Կապանի համայնքապետարանից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

**Փորձաքննական պահանջներ**

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կապանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
7. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

9. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:
10. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի, Կապան համայնքի Սյունիք բնակավայրում կառուցվող կրթահամալիրի շրջակա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան